



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարություն
«Ատոմային էլեկտրակայանների շահագործման
հայկական գիտահետազոտական ինստիտուտ»
Փակ բաժնետիրական ընկերություն
«ՀԱՅԱՏՈՍ»

08.08.2023թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի №1368-Ա առ 13 հուլիսի 2023թ. հրամանի, 2023թ. հուլիսի 22-ից օգոստոսի 3-ը ներառյալ գործուղվել եմ ԱՄՆ, Փոքր մոդուլային միջուկային էներգաբլոկների տեխնոլոգիաների ուսումնասիրման և Հայաստանում դրանց կիրառման հնարավորություններին ծանոթանալու համար: Աշխատանքային խումբը բաղկացած էր 13 մասնագետներից, պատվիրակության ղեկավարն էր ՀՀ ՏԿՆ նախարարի տեղակալ՝ պարոն Հակոբ Վարդանյանը:

Այցի առաջին փուլում պատվիրակությունը այցելեց ԱՄՆ Օուք-Րիջի (OAK RIDGE NL) և Այդահոյի Ազգային (INL) լաբորատորիաներ, ուր ծանոթացանք տարբեր հետազոտական տեղակայանքների աշխատանքներին, հետազոտությունների ծրագրերին և նպատակներին: Ներկայումս ԱՄՆ Ազգային լաբորատորիաները իրականացնում են միջուկային էներգետիկայի զարգացմանը նպաստող հետազոտությունների և մշակումների լայն շրջանակ՝ «վթարը հանդուրժող» կարևոր սկզբունքով, նոր մշակումներ կապված միջուկային վառելիքի հետ, մետաղական տարրերի արտադրության ժամանակակից մեթոդների մշակում և փորձարկում, նյութագիտական ուսումնասիրություններ հետազոտական ռեակտորներում, աղային ջերմատարի ջերմահիդրավիկ հետազոտություններ, աշխատած վառելիքի մեխանիկական հատկությունների հետազոտություններ և այլն:

Պատվիրակությանը ներկայացվեցին որոշ տեղեկություններ Westinghouse, General Electric և NuScale ընկերությունների կողմից մշակված փոքր մոդուլային ռեակտորների (ՓՄՌ), ինչպես նաև դրանց ներդրման նախագծերի վերաբերյալ:

Ներկայումս ԱՄՆ-ում սկսվել են 2 տեսակի ՓՄՌ-ով նախատիպային ցուցադրական կայանների կառուցման նախագծերը՝

- Այդահոյի Ազգային լաբորատորիայի տարածքում NuScale ինտեգրալ PWR տիպի ՓՄՌ-ով 6-մոդուլանի կայան՝ 6 * 77 ՄՎտ էլ. հզորությամբ;
- Թենեսի նահանգում General Electric և Hitachi ընկերությունների կողմից մշակվող BWRX-300 եռացող տիպի ՓՄՌ-ով էներգաբլոկ՝ 300 ՄՎտ էլ. հզորությամբ (պատվիրակությունը այցելեց կառուցվող կայանի հարթակ):

Նշված նախագծերի համաձայն՝ նախատիպային ցուցադրական կայանները պետք է հանձնվեն շահագործման 2030թ.-ին և 2032թ.-ին համապատասխանաբար:


Westinghouse ընկերության կողմից ներկայումս նախագծվում է AP-300 ՓՄՌ՝ իր AP-1000 ամենաժամանակակից միջուկային էներգաբլոկի տեխնոլոգիաների հիմքի վրա: AP-300 իրենից ներկայացնում է մեկ շոգեգեներատորով, պարզեցված սխեմայով և ժամանակակից պասիվ անվտանգության համակարգերով 300 ՄՎտ էլ. հզորությամբ էներգաբլոկ: Համաձայն նախագծի՝ AP-300-ի լիցենզավորման փուլը ԱՄՆ-ում կավարտվի 2027թ.-ին:

Այցի 2-րդ փուլում պատվիրակությունը ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում այցելեց տարբեր պետական կառույցներ և ունեցավ հանդիպումներ ԱՄՆ էներգետիկայի Դեպարտամենտի, Միջազգային Առևտրի Դեպարտամենտի, Միջուկային Կարգավորման Կոմիտեի ներկայացուցիչների հետ: Միջուկային էներգետիկայի ինստիտուտում կայացավ նաև «կլոր սեղան» ձևաչափով հանդիպում ԱՄՆ միջուկային արդյունաբերության ընկերությունների ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին ԱՄՆ-Հայաստան միջուկային էներգետիկայի բնագավառում համագործակցության խնդիրները՝ ԱՄՆ նոր տեխնոլոգիաներով փոքր մոդուլային ռեակտորներով կայանների ներդրման հնարավորությունները Հայաստանում:

Այցի վերջնամասում հանդիպում տեղի ունեցավ ԱՄՆ Պետական Դեպարտամենտի ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին ԱՄՆ-Հայաստան համագործակցության զարգացման խնդիրները՝ ԱՄՆ միջուկային տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները Հայաստանում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ



ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ